

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տօլ.
Վեցամսեայ 1 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՐ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԱԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՏԷ
Rédaction du Journal
"Iraounk"
Varna
Редакция на
Вѣстникъ
„Иравункъ“
Варна
Իրոսրիշնք եւս չեւ
տրոշիր

ՄԻՆԻՍԵՐԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատ հարեանցի կերպով անցած էինք խմբագրատ Մինիսերի սպանութեան տխուր լուրին վերայէն: Կարծէ որ քիչ մը մեր ընթերցողաց ճանչցնենք Մինիսերը և զանի սպաննել տուողներու պատասխանատուութեան աստիճանը:

Ո՞վ էր խմբագրատ Մինիսերը: Մենք, ինչպէս շատ շատեր, գիտենք որ խմբագրատ Մինիսերն էր Յ. Դաշնակցութեան կառուող շարքերուն մէջ էն կարկառուն դէմքն էր, անիկայ չերմ և անկեղծ հայրենասէր Հայ մըն էր, նոյն իսկ Դաշնակցական շէֆերու և օսկաններու վկայութեամբ: Կովկասի հայ-թաթարական կրօնականներուն մէջ հրաշալի քաջագործութիւններ ըրած և բազմիցս իր կեանքը վտանգներու մէջ նետած եղական հերոս մը:

Այսու հանդերձ 1907ին Դաշնակցութեան Պատգ ժողովին մէջ երբ այդ կուսակցութեան մէկ քանի շէֆերը պաշարի բերին Կովկասեան նախագիծը՝ այսինքն իրենց Դաշնակցութեան ծրագրին մէջ իբր նպատակակէտ, Մինիսերը բուռն կերպով ընդդիմացաւ այդ առաջարկին և չուզեց միմիայն Հայրենասիրական նպատակաւ կազմուած կուսակցութեան մէջ ներմուծել այդ նուիրական նըպատակէն իսպառ հեռացող և ազգին մէջ դասակարգային կռիւ յարուցանող Օստիալիզմը ընդունել: Մանաւանդ Մինիսերն կ'ընդկատէր թէ Կովկասեան նախագիծով Ձարիզի, տիրող ռուս կառավարութեան դէմ ալ կռիւ յայտարարելով իսպառ վտանգուած կ'ըլլար տաճկահայ դատը:

Յայտնի է թէ այն ատեն Մինիսերն այս գաղափարէն էր ամբողջ տաճկայութիւնը և Դաշնակցութեան անդամոց ստուար մեծամասնութիւնը, Բայց Կովկասցի կարգ մը Դաշնակցական շէֆերը կանխապատրաստուած և իրենց լոկոյները պատգաւաւոր ընտրել

տուած ըլլալով, յաջողեցան այդ Պատգ ժողովին մէջ կարգ մը էնթրիքներով, սպանալիքներով ու խոստումներով մեծամասնութիւն շահիլ և իրենց առաջարկութիւնը մեծամասնութեամբ ընդունուած հռչակել: Ի Ձարգարեանի նման կարգ մը կնամարդի պատգամաւորներ տակաւին քանի մը օր առաջ սօսիալիզմին հակառակ գրած ու խօսած ըլլալով հանդերձ, համակերպեցան Կովկասեան նախագիծին և սօսիալիզմին, Կովկասցի շէֆերուն համակրութիւնը ձեռք բերելու և կուսակցութեան մէջ իրենց գիրք շինելու համար: Մինիսերն շատ քիչ չերու հետ հաստատ մնաց իր համոզման մէջ և շարունակեց այն ուղղութեամբ գործել անվեհեր կերպով:

Բայց հակառակ շատ մը դաշնակցականներու համակրութիւնը Մինիսերին հետ ըլլալուն, շէֆերը զանի պաշտոնագէտ կուսակցութեան արտաքսուած յայտարարեցին և հետզհետէ անոր դէմ հիւսեցին սա ամբաստանութիւնները՝ թէ Մինիսերն դաշնակցական կազմած է բոլոր դաշնակցական պետերը սպաննելու և ինքն առանձինն դիտարկուող իշխելու: Թէ 1907ի Պատգ ժողովին Մինիսերն արտաքսուած է Դաշնակցութեան շարքերէն, և թէ Մինիսերն եղած է Ռուսիոյ բանտերուն մէջ հեծող հարիւրաւոր հայերու բանտարկութեանը պատճառ, այսինքն Մինիսերն է որ այդ մարդիկը մատուցէ Ռուս կառավարութեան, եւ այս կերպով յերուրուած ամբաստանութեանց հիման վրայ Մինիսերը մահուան դատապարտուած էր Դաշնակցութեան կողմէ:

Մինիսերին վրայ կատարուած երեք մահափորձերէն սա վերջինը կատարեալ յաջողութիւն մեղաւ այն դաշնակցութեան որ ինք զինք լիկալ յայտարարած է 1908էն ի վեր:

Ազգին ու հայրենիքին նուիրւած այնչափ անկեղծ ու անձնուէր գործիչ մը սպաննել տալէ յետոյ իրենց օսկաններուն մէջ ալ զանի բարոյագէտ մեղքն

շանալ կրկնակ ոճրագործութիւն է, իսկ սա սթափուած հայ ժողովուրդին այսօր այդպէս կ'ընկնել յուսալ առնուած յիմարութիւն է:

Մինիսերը մատնի՛չ բայց ո՞վ կը մարտէ այդ «մատուցող» Մինիսերէն կա՞յ որ չի գիտնայ թէ Դաշնակցութեան օսկաններուն միջոցաւ «Ձարիզմը պիտի տա պալենք» ի բերիցս կրկնուած բացառանքութիւնները արդէն ռուս կառավարութեան բոլոր ու շաղկապները իրենց շարժումներուն վրայ հրաւիրած էին: Այդ անխոհեմ և պոռոտ բացառանքութեանց շնորհիւ միթէ մնացած էր Կովկասի մէջ մէկը, ըլլալ Հայ թէ թաթար, վրացի թէ Ռուս, որ չի ճանչար ու չի կըռահէր թէ որոնք են դաշնակցական շէֆերը, գործները ու զեկավարները: Մինիսերն այդ անխոհեմութեանց շնորհիւ չէ՞ր որ բոլոր յեղափոխական արիւնները, գոյքերը ու տետրակները հետը հետէ կառավարութեան ձեռք անցան և բանտերը լեցան Հայերով և ամբողջ Կովկասահայութիւնը հալածանքի ու թշուառութեան մատնուեցաւ:

Այս բոլորի պատասխանատուն Մինիսերն է՝ թէ «Կովկասեան նախագիծը ու սօսիալիզմը» մէջ տեղ նետող այն սէկ քանի ծեփերը:

Ամօթ է ալ այս տեսակ մարտիկներ կ'ըլլող շատ չմնաց:

Յ. Պուրպիք:

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՕՄԻԹԻՒՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սեւանիկի մէջ գումարուած Ժէօն-Թիւրք Գոմիթէի համաժողովին մէջ Խալիլ պէյ կարգաց այն տեղեկագիրը որ կը թուէ նոյն Գոմիթէին ազգեցութեամբ խմբագրուած, խորհրդարանէն ընդունուած և գործադրութեան դրուած օրէնքներովն ձեռք բերուած արդիւնքը: Այդ տեղեկագիրը լաւ տպաւորութիւն գործեց է համաժողովին մէջ: Տեղեկագիրը կ'ըսէր խօսքի խորհրդարանին գործունէութեան

թեան, հրոսակներու դէմ դրուած օրէնքին, ընկերակցութեանց, մահուան և թափառաշրջիկներու օրէնքներուն վրայ, ըսելով որ տնոնք լաւ արդիւնք տուին: Վերջին ատեններս հրոսակները մեծ գործունէութիւն սկսան ցոյց տալ ըմբատութիւն յարուցանելու և օտար միջամտութիւն առաջ բերելու համար բայց յաջողեցան: Ինչ որ ալ ընեն խռովարար տարրերը, օտար միջամտութիւն յառաջ պիտի կրնայ գալ: Պատերազմ, նախարար Մահմուտ Շէվքէթ փաշայի անխոնջ ջանքերուն շնորհիւ յառաջ եկաւ զօրաւոր բանակ մը որ պիտի կրնայ սահմանադրութիւն պաշտպանել ամէն կողմէ: Այլ և այլ նահանգներու մէջ տեղի ունեցած հակասահմանադրական շարժումներն ստիպողական դարձուցին ձեռք առնել կարգ մը միջոցներ որ լաւ արդիւնք տուին Ալպանիոյ մէջ և ոչնուազ արդիւնք պիտի տան նաև Հօրանի մէջ: Հարկ եղած կորովով կատարուեցաւ զնահաւաքութիւնը Մակեդոնիոյ և Ալպանիոյ մէջ: Ձինահաւաքութիւնը և պոյթթըր մեծ արդիւնք ունեցան, զգալու համար կարգ մը ազգութեանց ըղձանքները և շատ բարեբար ազգեցութիւն ունեցան: Մահմետական բնակչութեան փոքրամասնութիւնը ուժովցնելու համար Տոքթ. Նիշլըմ պէյ կառավարութեան օժանդակութեամբ յաջողեցաւ Մակեդոնիոյ հաստատել դրացի երկիրներէ եկած 12,000 մահմետականները: Գալ տարի մի և նոյն նպատակին պիտի յատկացուին ուրիշ գումարներ: Գալով ոստիկանութեան, քաղաքներու մէջ ամէն պէտքեր կ'ընհացնէ անիկա, իսկ գիւղերու մէջ տակաւին նոյն ծառայութիւնները չի կրնար մատուցանել: Թէև այն տեղերն ալ ղգալի պիտի դարձուի վերակազմութեան ազգեցութիւնը: Հակառակ ոստիկան-գիւնուորութեան կազմակերպութեան համար եղած բոլոր ջանքերուն, տակաւին թերիներ կ'ուն: Ոչ միայն պէտք եղած գրամը կ'պակսի այլ նաև ոստիկան զինուոր ըլլալու կարող մարդիկ: Մանաւանդ

Մակեդոնիոյ մէջ Մահմետականները կ'զարչին ոստիկանները որովհետեւ իսկ ուրիշ ազգութիւններէ առնուած ոստիկանները չեն մատուցած Օ.մ. Բոմբիթէի անդամներ և կուսակիցներ կ'զբաւնուին վարչական ամէն ճիւղերու մէջ, որ կատարեալ համաձայնութեամբ և միօրինակ ծրագրի մը համեմատ կ'գործեն։ Ահրար կուսակցութեան գործունէութիւնը զսպուեցաւ, իսկ Տէմօքրատները չկրցան արմատ բռնել Մ. և Յ. կուսակցութիւնը կը վարէ քաղաքականութիւնը, և անոր ձեռքէն է Պետութեան յառաջդիմութիւնն ու բարգաւաճումը։ Այս գործունէութիւնը մէկ քանի տարի ետքը յառաջ պիտի բերէ այնքան զորաւոր և ամբողջինք Օսմ կայսրութիւն մը որ պիտի կրնայ ձայն ու տեղ պահանջել տէրութեանց շարքին մէջ։

Ինչպէս ընթերցողը կը տեսնէ տեղեկագրին բուն ոգին կը կայանայ բազկացուցիչ տարրերը տկարացնելու յաջողութիւններն մատնանիչ ընելու մէջ։

Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԴ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս մեր նախորդ թիւով յիշած էինք, ստացած ենք Հ. Բարեգ. Ընդ. Միութեան տալեկան Տեղեկագիրը, որ կը պարունակէ հաշուական բոլոր մանրամասնութիւնները և գործառնութեանց մասին կատարեալ տեղեկութիւններ։

Վերջին տարուան մէջ Միութեան հասոյթներն են՝
Մուտքի տուրքէ 89-798 զոչ,
Անդամավճարներէ 26.152 »
Նուիրատուութենէ 13.762 »
129 712 »
1909 ին դրամագլ. 871.505

Հիմն. դրամագլուխ 1001.517 զոչ
Այս դրամագլուխը յատկացուած է առաջնակարգ արժէթուղթերու որոնք Գրէտի Լիօնէ դրամատան յանձնուած են և անոնց ցուցակը կցուած է Տեղեկագրին։

Անցեալ տարւոյ լընթացքին մէջ Հայաստանի զանազան կողմերը Միութեան հասցուցած շնորհակատութիւնները արդէն օրը օրին գրռուած են այս սիւնակներու մէջ։ Միայն Գիւլիկիոյ շարքերէն անմիջապէս վերջը Միութիւնը 5300 ոսկի նպատակով գրեցած է հոն։

Նախորդ տարի Միութիւնը 686 անգամ ունէր, այս նոր տեղեկագրէն կը տեսնենք թէ անդամաց թիւը բարձրացած է 2.117 իւ Ասոնցմէ 750 ը Ամբիկայի մէջ, 605 ը Եգիպտոս, 59 է Խիւրքիս և 96 Եւրոպայի ցեղաները զանազան տեղեր։

Բայց այս Տեղեկագիրը 1910 ապրիլ 30, վիճակը կը ներկայացնէ, անկէ առդին անցնող վեց ամիսներուն մէջ շատ աւելցած

է անդամաց թիւը և նորանոր մասնաճիւղեր կ'ազմուած են։

Չորք Մարզուանի մէջ Միութեան բանակը որբանոցին 500 ոսկի ևս նուիրած է Բէլէկեան խան որպէսզի բացուի փութացուի։

Անցեալ շաբթու տեղի ունեցաւ Պոլսոյ մէջ Ազգանուէր Հարուհեաց ընկերութեան ընդհ ժողովոյ նիստը։ Ժողովոյ ներկայացուցած երկամեայ տեղեկագրէն տեսնուեցաւ թէ բացի նախորդ տարւոյ 17 վճարաններէն, այս տարի բացուած են նաև երեք վարժարաններ, Հազլու, Ալպիստան և Թիւրքուս, նաև Կարնոյ մէջ վարժուհիներու մը, ուր պիտի դասախոսեն Սանատարեան վարժարանի բրոֆէսէօրները։

Ինչպէս Բարեգ. Միութիւնը ընդհանուր կերպով, Միայեալ և Հայուհեաց ընկերութիւններն ալ կրթական տեսակետով՝ տառապեալ հայ ազգին օփոխանքը եղած են։ Կարժէ որ ամեն զգայուն և պարտաճանաչ հայ փութայ նուիրել իր նիւթական աշակցութիւնը այդ ազգանուէր հաստատութիւններուն՝ որոնք զբերած ծառնով կուսակցութեան աշխատելի ազգեցութենէն, գործեն լռիկ և կ'ընթանան խոհականութեան ճամբան։

ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՈՅ ՇՈՒՐՁ

Դաշնակցական խռովարարներու ճնշումէն Ազգ. Ժողովը գերծ կացուցանելու համար 50 երեսփոխաններու տարաբնուութեամբ հանրագումարին մը ուրախ օր ներկայացուցաւ Մ. Պատրիարքին. անով 50 երեսփոխանները կը պահանջէին Պատրիարքին խնդրել օսմ. իշխանութեան աշակցութիւնը, բունութեան, ճնշումէ աղտո կացուցանելու ժողովը, ինչպէս կը տրամադրէ նոյն ժամանակէն և ինչպէս որոշած է Ազգ. Ժողովը անցեալ նիստին մէջ։

Սկիւտարի երեք թաղերէն 320 ստորագրութեամբ հանրագումարին ուղղուած է Ազգ. Երես. Ժողովին։ Ահա անոր պատճենը։

Վսեմաշուք Աստուծոյն Եփ. Ստորագրեալքս, Սկիւտարի երեք թաղերու հարազատ Հայ Ժողովուրդին ամէն զատակարարներուն պատկանող 320 չափ անասանք, խորապէս ազգունելով հայկական կեանքին վերջին ամենացաւալի երկնայինքն և ի մասն նաւոր յայտնելով մեր բուն զայրութիւնը անկողս արժանաւոր երեսփոխաններէն Տոքթ. Սեդրակեան Էփ, ի անձն վրայ դրածուած պիտի յարձակման համար, ներկայ հանրագումարին կը յայտարարենք թէ Հայ ազգն օրինաւորապէս ըր ազատ քուէներով ընտրած ըլլալով Դատկ. Ժողովը իբրեւ ըր ներկայացուցիչը՝ երբեք համարու չենք որ ժողովոյ որոշմանց ազատութեան վրայ ճշուած ըլլալով դրածու թէ կ'ազատապարտենք այդ հարգելի անընդհանրական ամէն ձգտում և ձեռնարկ

ու իբրեւ պարտաճանաչ և օրինապահ քաղաքացիներ պատրաստ ըլլալով պաշտպան կանգնելու ժողովոյ հեղինակութեան և պատին՝ որ Ազգին պատին է, չեմք ինքն իր խախտմանը որ այս նկատմամբ գործադրէ ինչ որ կ'ընկաղրէ Ձեր խիճը՝ դարման տանելու համար Ազգին ներկայ տաքնապալի կացութեան։

522 ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Վաւերացուած Սկիւտարի երեք թաղերու թաղական Խորհուրդներու կողմէ 28 10 Նոյ. 1910, Սկիւտար

Ահա հանրագումարին մըն ալ Սա. մաթիոյ ազգայիններէն։

«Հայ Ժողովուրդին հոծ մեծամասնութիւնը իբրեւ ճշմարիտ զաւակներ իր ցեղին, կու գայ խնդրել Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովէն որ Ազգ. Վարչութեան հրաժարական մերժութիւն և միեւնոյն ատեն կը հրաւիրէ արդարապէս երեսփոխանութիւնը որ ՕՐԷՆԻԻ և ԻՐԱՆԻՆԻԻ պաշտպանութիւնն ընելու վարկեան միակ չվարանի, ապահով ըլլալով որ Հայ անձնուէրներու ստուարակիւ խումբ մը՝ Ազգ. Պորթաբանին սովին վրայ իսկ՝ յանուն մեծամասնութեան պատրաստ է ամէն գնով պաշտպանելու ամէն անոնք՝ որոնք արդարութեան պաշտպանութեանը կ'ընդունին և օրինաւորութեամբ ձաղկելու ամէն անոնք որոնք անիւրաւութեան պատուանդանին վրայ կ'ուզեն բարձրացնել իրենց պտուղաբար շահերուն փխրուն ամբարտակը։

127 ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Որոնց ինքնապիւր վաւերացուած է Սաւարիոյ Ս. Դեռոյ Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդին կողմէ։

Ինքզինքնին «ազատական» կոչող 40 Դաշնակցական երեսփոխաններու խմբակցութիւնը՝ որուն նախադրան է անգոյն Չորքապը, բանակցութիւն առաջարկած էր կեդրոնի երեսփոխաններու խումբին հետ, այդ բանակցութիւնը տեղի ունիցաւ բայց համաձայնութիւն չի գոյացաւ, վասնզոր ինքնակոչազատականք պնդեցին ինքն իրենց վրայ Դաշնակցականաց բաղձանքն է Իւրեանը պատրիարք պահել (որովհետեւ իրենց գործին շատ կուգայ անոր թուրքութիւնը ազգային իշխանութիւնը գիւրեմութեամբ քանգելու համար ի նոր ժէօն—Թիւրք զօմբիլէին և ընդունել Վարչական կրկին ժողովներուն հրապարականք։ Ասկէ զատ մարլիկը իրենց հաշուով պատրաստել են նոր վարչութեան ցանկը։ Անոնք ամէն գնով կը ջանան Ազգ. Պատրիարքարանը իրենց ձեռքին մէջ առնել, որպէսզի ինքնիշխան տէր զաւանակալներու կառուածներուն և հասոյթներուն, որոնց մէկ մասը յատկացնեն իրենց կուսակցիներու ազգրոստին և միւս մասն ալ գործածեն կրօնը, եկեղեցի, աղէ ու ընտանիք քանգող մտքեր տարածելու։

Պոլսոյ հայ ազգային գործերու այս տխուր երեսփոխաններու մասին Հաւասի գործակալութիւնը չտեսնելով չեմք իր տուած է ֆրանսական թերթերուն։

«Հայ ազգը այժմ կատարեալ անիշխանութեան վիճակ մը կը ներկայացընէ։ Անմիջապէս իրենք բուն իսկ խառն ժողովին մէջ մտած է հրաժար. Վարչ. ատենագրար և Պատրիարք իրենք անկարող կը գտնէ համաձայնութիւն հաստատելու ազգին զանազան հատուածներուն մէջ, որոնց իրարու դէմ տուելութիւնը ազգը կ'որոշման կը տանը։»

ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ ՅԵՏԱԶԳՈՒՄ

Այս ուրախ օր ալ Ազգ. Ժողովը նիստ չունեցաւ, վասն զի «Ազատական» խմբակին կողմէ Չորքապ և Հալաճեան նոր գիւմուս մըն ալ ընելով կեդրոնի խմբակցութեան պատկանող վ. Թէքէեանի, հոս մաճայնած են նիստը յետաձգելու ի սէր խաղաղութեան, թէև մեծամասնութեան կողմին դժգոհութիւն պատճառած է այս յետաձգումը, բայց չեն մերժած ըսել շտալու համար թէ իրենց մեծամասնութեան ուժին կը լընել արհամարհեցին փոքրամասնութեան առաջարկը։

Բայց կարգ մը երեսփոխաններ այս յետաձգման կարգադրութենէն տեղեկութիւն չունենալով 50 չափ ներկայ գտնուեցան խորհրդարան, ուր դիւանին կողմէ ծանուցուեցաւ յետաձգումը ասոր դէմ գժգոհութեան արտայայտութիւններ և վիճաբանութիւններ ալ եղան և հետզհետէ ներկաները ցրուեցան խաղաղ կերպով։

Իսկ Ժողովուրդին պայով խուռն բաղձութեամբ լեցուած էր թէ Ե. կեդրոնի բակը և թէ չըջալի փողոցները իրենց չէքերէն բերուած դաշակցական տղերք տեսնելով փոքր անխոհեմութիւն մ'ընելով շարաչար պիտի տուէին, ուստի զգուշ վարուեցան իրենց դէմ ծառայած ուժին հանդէպ և խաղաղութիւնը չի խանգարուեցաւ։ Սակայն կը կարծենք թէ առանց արիւնհեղութեան չէր վերջանար եթէ Ժողովը տեղի ունենալով մէկ կամ միւս կողմի աննպատակ որոշումներ տալու ելնէր։ Այս պարագային պատասխանատուութիւնը պիտի ծանրանար Դուրեան վեղարաւորներու վրայ ո ոնք հակառակ 50 երեսփոխաններու գրաւոր պահանջին ոստիկանական հակողութիւն չը հրաւիրէ զատ, ինքնաբերաբար եկած ոստիկաններուն ալ ճամբայ տուած էին ով գիտէ ինչ յաւակնութեամբ։

ՆԵՍԱՆԱԻՐ ԱՅՅԵԼՈՒՆԵՐ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

Վենետիկի Միթրաքեաններու Բազմավիւյ ամսաթերթին մէջ կը կարգանք վեհապետներու և նշանաւոր անձնաւորութեանց այցելութեան մասին հետեւեալը։

«Միտրաքեաններն պատիւ ունեցաւ հիւրընկալելու սեպտ. 3ին. (Ն. Տ.) Ն. Վ. Վիկտոր Էմանուէլ Գ. Իտալիոյ թագաւորը, ընկերակցութեամբ իր մօրեղբոր իշխան Թոմմազօլի, Պատրիարքական նախարարին, Մովակլին, սպաններու և հետեւորդ պալատականներու։

Բայցովին անակնկալ էր իր այս այցելութիւնը—զոր առաջին անգամ կուտայ մեզ, մինչ Վենետիկ անգամ չեւ հասած չէր։ Ինքը կուգար Ազգիականի մէջ իր «Թախաքար» զբօսանաւով հանդիսատես ըլլալու իտալական նաւատորմին ռազմափորձներուն։ Ուստի

19. - Կոմսուհի Էթէմիա Առլէրաֆէլտ

Գ. - Սօսաւորապէս երեք տարիներէ
ի վեր է որ «Հազարաւոր Պրելպրել»
անունով հայկական նուագախումբ մը
կայմուած էր տեղս, որը՝ իր անդամ-
ներսւ մասնաւոր վճարումով ձայնա-
դրագէտ Երաժիշտ Լևոն Եջըր մը խնա-
մոց ներքեւ գործիա՛ն նուագածու-
թեան վարժութիւններ կընէր այս ան-
գամ այս գեղարուեստական գործը-
ւելի հաստատուն կոռւանի մը վրայ
դնելու համար, հիմնական և ներքին
կանոնադրութիւն մը ալ պատրաստ-
ուեցաւ, որ այդ ընկերութեան ընդհ-
ժողովոյ մէջ նկատուլութեան առնուելէ
ետքը ընդունուեցաւ ի գործադրու-

3tsurfhrfkr

Պոլսոյ Ազգ. Հրահանգանոցը այս
միջոցիւ շարժականց վը սեղու
առօրեայ պէտքերու համար
Հոգաբարձութիւնը ճարահատ չի
լաժարել վը փառէ. վերջին նիս
տին որոշել է փոխաւսուլթեան դը
մել Խայց արդէն դիզուած պարտ
քերուն վրայ ուր պարտքեր ա
ւելցնելուն ժայլը ուր կերթայ
Պատրիարքարանը խառնակ վը
ճակը և Սոս. հայերեւոյթականն
րուն ապրկար, և աւփոյթ վը ա
բելուծը աւելթ տուրն որ պետա
կան հացի և միսի նպատը դա
լի ու զեղչուի. իբր թէ այդ հի
ւանդանոցի պատասպանները
Սոս. հպատակներ չըլլային. Այ
ստիճան խորոսարութիւն կառ.

— Պապատաշի քահանային անվայել ընթացքին դէմ բողոքոթղթակցութիւններ կը հասնի մեզ հրատարակելու խնդրանք Մենք չենք կրնար տեղ տալ մեանձուկ սիւնակներու մէջ այլ բոլորին, այլ կը յանձնարարենք բողոքոյններուն ուր իրենց փաստացի գանգատները ներկայացնեն Ազգ. Պատրիարքարան, ու միակձեռնահաս իշխանութիւնէ պատշաճն տնօրինելու և գալթակցութեանց առկէն առնելու Վերջին նամակէ մը կրիմանան թէ հանրագրութեամբ մը խնդրը Պատրիարքարանի ներկայացուած է:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ ՄԸ

Syringae sprunckfsh Lungen